ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի մայիսի 25-ից 27-ը Ղրղզստանի Հանրապետություն՝ ք. Բիշքեկ կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1	**Անունը, ազգանունը**	Արմեն Արզումանյան
2	**Զբաղեցրած պաշտոնը**	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
3	**Գործուղման վայրը և ժամկետները**	Ղրղզստանի Հանրապետություն (Բիշքեկ), 2022 թվականի մայիսի 25-27-ը
4	**Հրավիրող կողմը**	Եվրասիական տնտեսական հանձնաժողովի Կոլեգիայի նախագահ
5	**Գործուղման նպատակը**	Մասնակցություն Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի շրջանակներում «Եվրասիական տնտեսական համաժողով–2022» համաժողովին:
6	**Քննարկված թեմաները**	Համաժողովի ընթացքում կայացել են բազմաթիվ թեմատիկ հանդիպումներ և քննարկելու են առկա ոլորտային տնտեսական մարտահրավերները: Համաժողովի ընթացքում անցկացվել է ագրոպարենային ապրանքների ցուցահանդես: ՀՀ էկոնոմիկայի փոխնախարարը հրավիրված էր նաև՝ որպես բանախոս «Միության ներքին շուկայի հեռանկարներն առանց խոչընդոտների, զարգացման ուղիները» քննարկման ընթացքում ելույթ ունենալու նպատակով:
7	**Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**	ՀՀ էկոնոմիկայի փոխնախարար Արմեն Արզումանյանը ելույթի ժամանակ անդրադարձել է՝ ➢ ԵԱՏՄ-ում փոխադարձ առևտրի խոչընդոտների վերացումը Եվրասիական տնտեսական միության առաջնահերթություններից է, որի նպատակն է ապահովել ներքին շուկաների գործունեությունը այդ թվում՝ խոչընդոտների, որոնք սահմանափակում են ձեռնարկատերերի՝ մուտք գործելու ազատությունը ԵԱՏՄ անդամ երկրներ: ➢ Հայաստանի անդամակցությունն ունի իր առանձնահատկությունները՝ դա ԵԱՏՄ մյուս անդամների հետ ընդհանուր սահմանի բացակայությունն է: Սակայն դա չի խանգարում Հայաստանին ինտեգրվել միասնական կարգավորող համակարգերին, մասնավորապես՝

		ընդհանուր տնտեսական տարածքում ձևավորվող տրանսպորտային համակարգերին: ➢ Հայաստանի առջև կանգնած է ԵԱՏՄ անդամ երկրների հետ շարունակական հաղորդակցություն ապահովելու խնդիրը. ԵԱՏՄ երկրների հետ ընդհանուր սահմանի բացակայության պայմաններում մեր առևտրատնտեսական հարաբերություններն իրականացվում են Վրաստանի տարածքով՝ Վերնի Լարս անցակետով: Սակայն, ցավոք, մի շարք հանգամանքների պատճառով՝ եղանակային պայմանների, բյուրոկրատական ընթացակարգերի, այս անցակետի աշխատանքը պարբերաբար խաթարվում է, ինչը լուրջ վնաս է հասցնում մեր տնտեսվարող սուբյեկտներին: Այս առումով մեծապես կարևորում ենք ԵԱՏՄ երկրներին պատկանող տրանսպորտային միջոցների համար առանձին անցուղու ստեղծումը, ինչը մեծապես կնպաստի բեռնափոխադրումների իրականացմանը: Սա մեր երկրների բիզնեսի ներկայացուցիչներին իրական պատկերացում կտա մեր միության գործունեության օգտակարության մասին: ➢ Մենք կանենք հնարավոր ամեն ինչ, որպեսզի Հայաստանը, հենվելով իր փորձի և մրցակցային առավելությունների վրա, այդ թվում՝ ինստիտուցիոնալ և կառուցվածքային բարեփոխումների շարունակման միջոցով, նպաստի եվրասիական տարածքի ամրապնդմանը: Մենք համոզված ենք, որ մեր ինտեգրացիոն ասոցիացիայի շրջանակներում հավասար համագործակցության ձևավորումը, ի վերջո, պետք է ծառայի բիզնես վարելու հարմարավետ պայմանների և մարդկային ներուժի լիարժեք իրացմանը:
9	**Ստորագրությունը, ամսաթիվը**	02.06.2022թ